

զարով եւ շատ նեղութեամբ հակառակ եզերքն  
 ելաւ, ուստի ճամբորդ ձիաւոր մը զինք դիմաց  
 անցուց: Բերիա (Հալէպ) հասնելով՝ եկեղեց-  
 ւոյ խուցերը բնակեցան երեք ամիս: Այստեղ  
 Յիսուսեանց կարգէն Հ. Անտոն Պովիյէ (Beau-  
 villier) միսիոնարին գացին, կաթողիկէ հաւա-  
 տոյ դաւանութիւն տուին, խոստովանեցան, հա-  
 ղորդուեցան եւ անոր յանձնարարականներով  
 ճամբայ ելան դէպ Ալեքսանդրէտ, եւ գաղղիա-  
 կան նաւ մը մտան: Իրենց նաւը մտաւ նաեւ  
 Վիլիկիոյ կաթողիկոսը Գրիգոր Պիժակ Եպիսկո-  
 պոսի մը հետ դէպ Իտալիա երթալու, սակայն  
 պատերազմի պատճառաւ նաւն ստիպուեցաւ  
 Վիպրոս ապաւինիլ. չորսը Տուղա նաւահան-  
 գիստը դուրս ելան եւ Հայր Ս. Մակար վանքը  
 գացին: Ինչպէս ճամբան, նոյնպէս վանքին մէջ  
 կաթողիկոսը կը ջանար, որ Յովնան վ.ը հա-  
 մոզէ՝ յանձն առնուլ Եպիսկոպոս ձեռնադրուիլ.  
 եւ զՄխիթար սարկաւազ՝ որ զինք վարդապետ  
 ձեռնադրէ: Մխիթար որոշակի մերժեց. իսկ  
 Յովնան՝ զիջաւ վերջապէս. եւ նոյն եկեղեցւոյ  
 մէջ, 1695ին Օգոստ. ամսոյն ձեռնադրուեցաւ  
 Եպիսկոպոս Սեբաստիոյ կապպադովկացւոց: Կա-  
 թողիկոսն, որ դէպ ի Հռոմ կ'ուղեւորէր մէկ  
 Եպիսկոպոսով, կ'ուզէր որ հետն երկու Եպիսկո-  
 պոսներով եւ մէկ վարդապետով Հռոմ մտնէր,  
 ուր ասոնք ալ արդէն կը դիմէին: Քիչ ետքը  
 վտանգն անցած ըլլալուն՝ կաթողիկոսն իր երկու  
 Եպիսկոպոսներով շարունակեց ճամբան դէպ Ի-  
 Հռոմ: